

նապէս տալիս է նա երկարատև աշխատելու ընդունակութեան ապահովութիւն, հօգու աւելի բաւականութիւն, աւելի խորին ու ապահով ծերութիւն. ամէն տնօրէնի նա տալիս է հիմն լաւորակ տնօրէնութեան համար. կառավարութեան տալիս է միջոց խաղաղութիւն ու կարգ պահպանելու հասարակական կետնքի մէջ. ամէնքին չափ է տալիս չափելու՝ թէ որքան առողջ միտք կայ մի ժողովրդի մէջ, և որքան յառաջ է գնացել սա քաղաքակրթութեան ճանապարհի վերայ:

(Թարգմ.) ԲԺ. Մ. Զ.

ՄԱՐԴՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆՈՒՅ.

Ոչ մի գիտութիւն այնպիսի արգասաքեր հետեանք ու փառաւոր յաղթանակներ չէ ներկայացնում գիտնական աշխարհում, ինչպէս ներկայ գարիս բնախուզուզութիւնը. ուստի և շրպիտի զարմանալ, որ դա միակ օրինակելի գիտութիւն է համարուած: Սակայն այդ գիտութեան ներկայացուցիչների աշքին մի տարօրինակ բան էր երեսում, երբոր հոչակաւոր բնախոյզներից մինը բնագիտութեան սահմանի վերայ խօսելով մատուցոյց արեց աշխարհի հանելուկների վերայ, որոնք բնախուզութեան համար ընդմիշտ անլուծանելի պիտի մնան: Ignoramus ignorabimus.

Այդ անլուծանելի աշխարհի հանելուկներին վերագրումէ Դէ բուա Շալմոնդ գիտակից կեանքը, սկսած ամենապարզ զօրութիւններից մինչև ամենաբարձր մոքի և կամքի գործողութիւնները: Թէ ինչպէս նիւթերի ի միասին գործելուց, ատուների միաւորութիւնից կամ անջատումից մի որ և է հոգեկան վիճակ, մի զգայութիւն յառաջ է գալիս գորան մեր խոհականութիւնը չէ կարողանում հասնել: Բոլոր հոգեկան վիճակները, զգացողութիւնները, յիշողութիւններն, երեակայութիւնները, մոռքերը զգացումները, ձգտումները . . . այնքան զանազանվում են բնալուծական-ֆիզիքական երեսոյթներից, որ նոցա բնաւ համեմատել չէ կարելի այդ գործարանական երեւյթների հետ: Ուստի և մի անմիտ բան է, եթէ որ նիւթա-

պաշտը հոգեկան վիճակները բացառել է կամենում որպէս ուղեղի գործողութիւններ, և նա կարծումէ որ ուղեղը հոգեկան վիճակները ճիշտ այնպէս է արտադրում ինչպէս լեարդը՝ մաղձ և երիկամունքները՝ մէզ:

Այսպէս ուրեմն, բնախուզութեան տեսակէտից գիտակից կետնքը մի անհասկանալի հանելուկ է մնում մեզ համար, իսկ մեր միտքը, որ ամեն մի հետեանքին համապատասխան պատճառ է որոնում, հարկադրվումէ ընդունելու որ բոլորոյին զանազանէն նիւթերից գիտակից վիճակների հիմքը, որ մենք հոգի ենք անուանում և տալիս ենք այն ամեն էակներին, որոնց մէջ հոգեկան վիճակներ ենք նկատում:

Փորձառութիւնը ու նկատողութիւնը մեզ սովորեցնումեն, որ կենդանիների և մարդկան հոգեկան վիճակները միմեանց հետ շատ նմանութիւն ունին, և թէ մենք մարդիկս կենդանեաց մէջ շատ բան ենք նկատում, ինչ որ մեր անձի վերայ փորձել, տեսել ենք: Ումանք սրանից այն հետեանքն են հանել որ կենդանիների և մարդկան մէջ մի էական տարրերութիւն չկայ և թէ կենդանին մի անկատար մարդ կամ մարդս մի կատարեալ կենդանի է: Քննենք այս խնդիրը, թէ արդեօք մարդկան և կենդանիների մէջ եղած տարրերութիւնը էական է՞, թէ մի աստիճանական զանազանութիւն է. այս խնդիրի լուծումը ամենամեծ նշանակութիւն ունի մեզ համար, որովհետև դորանից կախուած է այն խնդիրի լուծումը, թէ մարդուտ հոգին անմահ է:

Անլիճելի է որ կենդանին իր հոգեկան կեանքում նմանութիւն ունի մարդու հետ: Կենդանին ունի զգայութիւններ և զգացողութիւններ. նա տեսնումէ, լսումէ, հոտոտումէ և լին. կարողանում է աւարկաներ մի նեանցից զանազանել և իրերի հեռաւորութեան, մեծութեան և ձեր մասին գաղափարներ կազմել: Եւ շաա անհիմն է մերժել, թէ կենդանիները զուրկ են մոտաւոր պատկերներից նոցա վերայ պէտք է մեքենաների պէս նայել և նոցա բոլոր շարժողութիւնները առարկաների նկատմամբ անդրադարձ շարժողութեամբ բացարել, ինչպէս որ այդ Դեկարտ և նորերից շատերը ասել են: Քանի որ կենդանին ոչ թէ միայն զգացողական գործարան ունի մեզ պէս, այլ և այդ զգացողական գործարանի գործածութիւնը այն

ձեռվ է լինում, ինչպէս մերինը։ Միայն բաւական է մի թեթև ակնարկ ձգել կենդանիների կեանքի վերայ, թէ ինչպէս նոքա միմնաց որոնում են, միմնացից փախչումեն, միմետնց հա- լածումեն, իրանց սնունդը որոնում և յափշտակումեն։ այս ամենը մեզ պարզ ցոյց է տալիս, որ նոքա այդ բոլորի գիտակ- ցութիւնը ունին։

Բացի դորանից կենդանին ունի ինքնազգացողութիւն։ նա մի որ և է ցաւ զգումէ որպէս իր սեփական ցաւ, ապա թէ ոչ նա չէր խուսափիլ դորանից և ոչ էլ դորա դէմ օգնութեան միջոց- ներ կորոնէր։ նա ունի իր զգացողութեան, տեսողութեան, լսո- ղութեան գիտակցութիւնը, ապա թէ ոչ իր աչքն ու ականջը չէր դարձնիլ գէպի մի որ և է առարկայ լսելու և տեսնելու համար։ Սակայն ասածներից դեռ ևս չէ կարելի եզրակացնել, թէ կենդանին ինքնազիտակցութիւն ունի։ Ակներև է որ կեն- դանին ունի յիշողութիւն, նա յիշումէ առաջուայ զգացած- ները՝ ախորժ և անախորժ փորձառութիւնները, շունը ճա- նաչումէ իր տիրոջ, անասունը վերստին գտնումէ իր գոմը։ Ճին իր մի քանի անգամ գնացած ճանապարհը տիրոջից աւելի լաւ է ճանաչում։ նաև չէ կարելի բալորովին մերժել, թէ կեն- դանիներն երեակայութիւն չունին։ նկատվում է, որ շները երազումեն, և քնի մէջ հաչում, և եթէ կենդանիները ջր- րուելուց յետոյ, կերակրի ետելից են վազում, նշանակում է որ նոքա այդ առարկան պատկերացնումեն։ Եթէ գառնուկը առաջուայ յըտեսնուած գայլից դողլալով փախչումէ և ճիերը գազանանոցի առջև անցնելիս անհանգիստ են լինում և եր- կիւլ կրում, պէտք է որ նոքա իրանց սպառնացսղ վտանգի մա- սին մի պատկերացում ունենան։ Կենդանիներն ունենում են նոյնպես և ընդհանուր պատկերացումներ։ այսպէս օրինակ, եթէ թութակը միանգամ լսումէ, որ շանը կօհո անունով են կանչում, այնպէս որ նա իր համար մի ընդհանուր պատկեր է կաղմում։ Երբ ֆրանսիացիներ Սուեզի ջրանցքը փորումէին նոյցա մօտ գոյլիս էին շատ պասկուճներ (գրիֆոներ) առանց երկիւղ կրելու մարդկանցից, բայց երբ ֆրանսիացիներ սկսեցին այդ կենդանիներին որսալ, դոքա սկսան երկիւղ կրել այն տեսակ եւրոպական ձեռվ հագնուած մարդկերանցից, ինչպէս որ դրան-

սիացիք էին հագնուած, բայց չէին երկնչում բեղուիներից, այդպէս նոքա իրանց թշնամու մասին մի ընդհանուր պատկեր էին կազմել—Երեսում է որ կենդանիները բնական մեծ հասկացողութիւն էլ ունին. Նոքա զարմանալի ճարպիկութեամբ նպատակին յարմար միջոցներ գործ գնելով կարողանումեն մնունդ գտնել, չափազանց խորամանկութեամբ և նենգութեամբ որս անել: Նոքա իմաստուն հոգացողութեամբ ձմերուայ համար պաշար են հաւաքում իւրաքանչիւր կենդանի ոչ թէ միայն կարողանում է իրան յարմար մնունդ ընտրել այլ և երբոր հիւանդ է գիտէ թէ ինչ խոտ նորան կրժշկէ: Օձակեր թուչունը նոր Գրանադայում շարունակ թունաւոր օձերով է կերակրվում և երբ մի թունաւոր օձ նորան կխայթէ, իսկոյն վէժիւկ կոչուած բոյսի մի քանի տերեն է ուտում. մի նենգը այդ բանը նկատելով գտաւ, որ այդ բոյսի հիւթը բուժիչ յատկութիւն ունի թունաւոր օձի խայթոցի գէմ, այդ ժամանակից սկսած վէժիւկոի հիւթը սկսան գործ գնել թունաւոր օձերի խայթածների գէմ, որ և յաջող հետեամնքներ էր ունենում: Նատ զարմանալի է նաև որ տեղափոխիկ թուչունները ամեն ճարտարութեամբ ժամանակին գալթումեն հեռու երկիրներ իրանց մնունդը որոնելու համար, քանի որ իրանց առաջուայ բնակած տեղում այդ յեն գանում: Յայտնի է որ ամեն տարի ծիծեռնակը թուչումէ Սենեգամբիա և ուրիշ երկիրներ, սոխակը նեղոսեան հովիտը ալն. և երր գարուն է գալիս, գոքա վերագառնումէն իրանց առաջուայ տելլը: Ոչ նուազ զարմանալի է նաև այն հանգամնքը, թէ ինչպէս կենդանիները մի որ և է վտանգի միջոցին աշխատումեն թշնամիներից ազատուել: Եւ եթէ գիտելու լինենք թէ ինչպէս կենդանիներն իրանց ձագերի համար հոգս տանում, նոցա համար նպատակայարմար բնակարաններ են կաւուցանում, սնունդ են մատակարարում և վտանգի միջոցին նոցա պաշտպանում և պաշպանում, այն ժամանակ կըտեսնենք որ այդ բոլոր գործունէութեան մէջ հասկացողութիւն և նկատողութիւն է երեսում: Սակայն մեզ կասկածելի է թուում, որ նոքա առհասարուկ հասկացողութեամբ և գատողութեամբ գործելու լինին որովհետեւ, եթէ կենդանին մըտահողութեամբ գործէր, այն ժամանակ ապագայում պատա-

Հելիք իրողութիւնները պէտք է որ առաջուց իմանար։ Մենք սեսնում ենք որ մեղունները մեղք են հաւաքում ձմերուայ համար, որը դեռ ևս իրանք չեն ճանաչում։ գիշերային թիթեռնիկը իր ածած ձուերը խաւով է ծածկում ցրտից պաշտպանելու համար։ բայց նա դեռ ևս ցուրտը չէ իմանում, և ահա այդպիսի օրինակներ շատ կան կենդանական աշխարհում։ և եթէ իսկապէս դոցա գործողութեանց մէջ մտածողութիւն լինէր, այն ժամանակ մենք կենդանիներին պիտի վերագրէինք ապագայի գիտակցութիւնը, որին մինչև անգամ մարդն էլ անընդունակ է։ Եւ եթէ կենդանիներ իսկապէս մտածողութեամբ և հասկացողութեամբ գործէին, այն ժամանակ նոքա այնպէս յաճախ իրանց կորսուեան համար չէին գործել։ Մեղուն սաստիկ խայթելուց զինի ոչնչանումէ։ նա իր կեանքը զոհումէ ամբողջ մեղունների խմբին առանց իմանալու։ բայց գրանից կենդանիների մէջ միևնույն ժամանակ հասկացողութեան և մըտածողութեան պակասութիւնը շատ է երեսում։ Այն թըրլ չուններն որոնց բոյնը ձագերի հետ միասին վանդակի մէջ են գնում, հոգս են տանում իրանց ձագերին սնունդ մասակարաբելու համար այնչափ ժամանակ մինչև որ ձագերը մեծանում են, բայց նոքա դեռ ևս չեն հասկանում որ իրանց ձագերը վանդակում փակուտծ լինելով անկարող են սնունդ գրտնելու։ Եթէ թուխս նստած թուչունի տակից ձուեր հանեն, այնու ամենայնիւ նա բաւական ժամանակ աննպատակ թուխս է նստում գատարկ բնի մէջ։ Եւ եթէ կատուից գողանում են իր փոքր ինչ մեծացած ձագերը և սոցա տեղ ծածուկ ուրիշ կատուի աւելի փոքրիկ ձագերը գնեն, նա սոցա առժամանակ կըկերակըէ, յետոյ նա նոցա կերակրելու համար մկներ է բերում, որոնք իւր սեփական ձագերին թէւ յարմար կլինէին։ բայց այժմեան ձագերը դեռ ևս այնքան զարգացած չկինելով չեն կարողանում նրանցով կերակրվել և սովամահ կորնչում են իրանց խնամատար մօր ձեռքսով։ Եթէ որ կրիցետուս, (cricetus) գիշերային կենդանին թուչունի թեերը ջարդումէ, որպէս զի նա այլ ևս թուչել չկարողանայ, այդ նա շատ նպատակայարմար է անում։ բայց նա նոյն գործողութիւնը աննպատակ կատարումէ և սատկած թուչունների վերաբերմամբ։ Կենդանիների մէջ մեր նկատած իրողութիւնները մեզ պարլ ցոյց են տուիս

սր նոքա, վերիվերոյ ցոյց տուած հասկացողութեան կից մեծ անհասկացողութիւն էլ ունին, և առհասարակ մեզ կասկածելի է թշում. թէ արդեօք կենդանիների մէջ իսկական գատողութիւն և մտածողութիւն տեղի ունին: Հենց այդ է պատճառը, որ մարդիկ շատ հեշտութեամբ չեն կարողանում կենդանիների ներքին աշխարհի մասին վճիռ առաջ: Մենք եթէ հակառամն ունենք մեր սեփական հոգեկան լինակները, զգացումը, մոտածելը, կամենալը արտաքին աշխարհում արտայայտել և առարկաներին իսկոյն նոյնը վերագրել: Այդ մենք անում ենք գլխաւորապէս այնպիսի կենդանիների վերաբերմամբ, որոնցից մարդիկ օգտուում են կամ բաւականութիւն են ստանում և որոնց հետ սերտ յարաբերութիւն ունին: Կառապանը ինչեր չէ պատմում իր ձիու խելօգութեան՝ որսորդը իր որսկանի խորամանկութեան մասին, որոնք այնպէս են կարծում իրը թէ կենդանին հասկանում և զգում է այն ամենը ինչ որ նոքա ասում են. թէև անուրանալի է, որ կենդանեաց ներքին աշխարհի մասին պատմուածները պարունակում են իրանց մէջ փոքր իշատէ ճշմարտութիւն, բայց մեծ մասամբ մեզ մութն են մնում և անբացարելի:

Որպէս զի մարդկան և կենդանիների մէջ եղած զանազանութիւնը ճիշտ որոշենք, հարկաւոր է խօսել գլխաւորապէս այն հոգեկան կարողութեանց մասին, որոնք կենդանիների մէջ չեն գտնվում:

Նախ յօդաւորեալ լեզուն. թէև կենդանին ևս ունի մի տեսակ լեզու, ոյն է ֆիզիքական գործողութիւններով, ծամածուռ շարժողութիւններով, ձայնական հնչիւններով կարողանում է արտայայտել ցաւի, երկիւլի, հաճութեան և լին զգացումներ, սակայն նա չունի այնպիսի լեզու, որ բառերով կարողանայր զգացածները արտայայտել: Մինչև անդամ կենդանիներից մի քանիսի լեզուի գործարանը շատ նման է մարդու լեզուին, ուստի իթէ որ յօդաւորեալ լեզուի արտայայտութիւնը ֆիղիքական գործողութիւններից կախումն ունենար, այն ժամանակ կենդանին ևս նոյնը պիտի անէր, ինչ որ մարդը: Սակայն մարդկան լեզուն կենդանիների լեզուից շատ մեծ առաւելութիւն է ներկայացնում. մէկ խօսքով նա է մարդկան մոռածողութեան պարզ յայտարարը: Խօսքը ոչ թէ մի ձայնական հըն-

չիւն է, այլ մի այնպիսի կամնաւոր հնչիւն է, որ մի միտք արտապայտում, և թէ միւնոյն միտքը կարելի է ուրիշ հնչիւնով արտայալտել. ուստի և շատ սիրալ է կարծել թէ լեզուն բանականութեան ստեղծիչ է, և կամ թէ բանականութիւնը առանց լեզուի չէ կարսլ գոյութիւն ունենալ, թէև ճշմարիտ է, որ լեզուն ամենանշանաւոր օժանդակ միջոց է բանականութեան կազմակերպութեան համար, բայց նա բանականութեան գոյութիւնը առաջուց ենթագրումէ, որի յայտաբարն ինքն է: Նթէ մինք առաջին անգամ մի որոշ խօսք է արտասանում, այդ նշանակում է որ նա մի միտք, մի մտապատկեր հնչիւնի հետ կապակցած է. այդ տեղ նախ լինումէ մի միտք և ապա նորա կոպակցութիւնը ձայնական հնչիւնի հետ: Այն բանը, որով մենք մի առարկայ անսաւանումենք: ոյց է տալիս միշտ մի ընդհանուր միտք, սորանով և մենք ճանաչում և անուանում ենք հատ հատ առարկաներ: Նթէ մենք կամենումենք մի առարկայի անուն տալ, մենք չենք կարող նորա բոլոր յատկութիւնները մի ձայնական հնչիւնով արտայալտել, այլ այդ յատկութիւնների միջից մենք այնպիսին ենք ընտրում, որ յատուկ է բոլոր միանման առարկաներին այդ ընդհանուր մտապատկերը մենք արտայայտումենք մի հնչիւնով, և դորանով մենք կոչումենք միւնոյն տեսակի ամեն մի առարկան: Այդպէս օրինակ մարդ բառը զանազան լեզուներում ոչ թէ մի որոշ մարդ է նշանակում, այլ մի ընդհանուր յատկութիւն, այն է «մահկանացու», «մոտածող»: Զի բառը նշանակում է «վազող», թըռչունը — «թռչող», կրակը — լուսաւորող, ճառագայթող»: Դուստր բառը արիական լեզուի մէջ նշանակում է «կիթող», որովհետու արիական ազգեր գլխաւորապէս անամնաբուժութեամբ գրապուռմէին և նոցա մէջ անասուններ կիթելու հոգուր աղջրերք պիտի հոգային, ուստի իրանց պարապմունքի համաձայն կոչուեցան գուստը: Մաքս Միւլլէր ասումէ «որ մարդ միայն այն ժամանակ կարող էր ծառի, գետի, կենդանու անուն տալ, երբար նա միայն մի ընդհանուր որոշիչ յատկութիւն կրգտնէր: Այսպէս ուրեմն լեզուն նախապէս ենթագրում է վերացման (abstraction) և ընդհանուր գաղափարներ կազմելու ընդունակութիւնը: Յայտնի է, որ կենդանին այդ ընդունակութիւնը չունի, ապա թէ ոչ նա ևս մարդու նման մի յօդաւորեալ լեզու

կազմակերպել պիտի կարողանար։ Կենդանին չունի լեզու, որովհետեւ խօսել չէ իմանում, և այդ չէ կարող լինել, քանի որ նա գաղափարներից և մոտապատկերներից զուրկ է։ Իրաւամբ ասում է Մաքս Միւլէրը, լեզուն մեր նուբիկոնն է, և ոչ մի կենդանի չէ կարող դորանից երբ և իցէ անցնել, այս է մեր իրական պատասխանը այն անձինքների գէմ՝ որոնք զարգացման մասին խօսում են, որոնք հաւատում են որ նոքա մարդկային ամեն ընդունակութեանց սկզբնական սաղմերը կապիկների մէջ են գտնում, և որոնք հնարաւորութեան գաղափարի հիման վերայ ասում են թէ մարդը մի բարւոքած, կատարելագործուած կենդանի է և գոյութեան սկզբնական կռուի մէջ յաղթոնակ տանող դիւցազն։ Լեզուն աւելի շօշափելի որոշից յատկանիշ է մարդու համար, քան թէ ուղեղի ծալքը, կամ գանկի կազմուածքը։

(Ըարունակելի) Թարգմ. ԱՆՐԴԻՍ 8. ԳԱՅԲԻՆԵԼԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Ըարունակութիւն)

15 ին Սեպտեմբերի 3 ժամ 5 րոպէ կեսօրից յետ, երբ նորին 0 ծութիւնը բերող առանձին գնացքը ծանրութեամբ մօտեցաւ Թիֆլիզի Կայարանին, սորա պատշգամիում ժողոված Հայերն և Համբարներն իրանց դրօշակներով թնդացրին օդը Կեցցէ՛ աղաղակներով, Կայտրանի պատշգամիում դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին Թիֆլիզի գաղափարլուին, ոստիկանապետն և այլ պատուաւոր քաղաքացիք։ Նորին 0 ծութիւնը ուղեկցութեամբ իւր պաշտօնեաների անցաւ բազմութեան միջով և մոտաւ կայսերական սենեակներն, ուր նրան ներկայացան շատ պատուաւոր անձինք. գուրսը պատրաստ կանգնած էր քառա-